ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԻՄԱ

DECENT WORK NOW

Աշխատանքային իրավունքները ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ)[1] ստորագրվել է 2017թ. Նոյեմբերին, որը ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2021թ. մարտի 1-ից:

Համաձայնագիրն անդրադառնում է աշխատանքային իրավունքներին զբաղվածության, կրթության, հավասար հնարավորությունների, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների համատեքստում:

Զբաղվածությունը, սոցիալական քաղաքականությունը եվ հավասար հնարավորությունները

(Մաս V, Գլուխ 15, հոդված 84 - 90)

Համաձայնագիրը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական Միությունը *ամրապնդեն իրենց երկխոսությունը և համագործակցությունը*՝ ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, զբաղվածության քաղաքականությունը, աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը, սոցիալական երկխոսությունը, սոցիալական պաշտպանությունը, սոցիալական ներգրավվածությունը, կանանց և տղամարդկանց հավասարությունը և խտրականության բացառումը խթանելուն՝ *դրանով նպաստելով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական համերաշխության ընդլայնմանը, կայուն զարգացմանը և կյանքի որակի բարելավմանը*:

[1] Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf

Այս համագործակցության ընթացքում կողմերը պիտի անդրադառնան հետևյալ հարցերին.

- աղքատության կրճատում և սոցիալական համերաշխության ընդլայնում,
- զբաղվածության քաղաքականություն՝ ուղղված արժանապատիվ աշխատանքային պայմաններով ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր ստեղծելուն՝ այդ թվում՝ ստվերային տնտեսության և ստվերային զբաղվածության մակարդակը նվազեցնելու նպատակով,
- աշխատաշուկային ուղղված ակտիվ միջոցառումների և զբաղվածության արդյունավետ ծառայությունների խթանում՝ աշխատաշուկաներն արդիականացնելու և աշխատաշուկայի կարիքներին համապատասխանություն ապահովելու համար,
- առավել ընդգրկուն աշխատաշուկաների և սոցիալական ապահովության այնպիսի համակարգերի խթանում, որոնցում ներառված են անապահով անձինք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք և փոքրամասնությունների խմբերը ներկայացնող անձինք,
- հավասար հնարավորություններ և ոչ խտրական վերաբերմունք՝ ուղղված կանանց և տղամարդկանց միջև հավասար հնարավորությունների ապահովմանը և կանանց և տղամարդկանց միջև հավասարության ընդլայնմանը, ինչպես նաև՝ սեռի, ռասայական կամ էթնիկ ծագման, կրոնի կամ դավանանքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ պայքարին,
- սոցիալական քաղաքականություն՝ ուղղված սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը և սոցիալական պաշտպանության համակարգերի

արդիականացմանը՝ որակի, հասանելիության և ֆինանսական կայունության առումով,

- սոցիալական գործընկերների մասնակցության ընդլայնում և սոցիալական երկխոսության խթանում, այդ թվում՝ համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի հնարավորություններն ամրապնդելու միջոցով,
- աշխատավայրում առողջության և անվտանգության խթանում, և
- կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խթանում:

Պիտի խրախուսվի համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավորապես՝ սոցիալական գործընկերների (Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության և Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի) ներգրավումը:

Կողմերը պետք է խթանեն կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը և խրախուսեն բազմազգ ձեռնարկությունների համար միազգայնորեն ընդունված պատասխանատու գործարար գործելակերպը:

Այս պարտավորությունների կատարման համար պիտի իրականացվի կանոնավոր երկխոսություն և օրենսդրության մոտարկում:

Առևտուր և կայուն զարգացում (Մաս VI, Գլուխ 9, Հոդված 274)

Համաձայնագրի 274-րդ հոդվածում, Կողմերը ընդունում են *բոլորի համար զբաղվածությունը և արժանապատիվ աշխատանքն որպես գլոբալացումը կառավարելու համար առանցքային տարրեր*, և վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ խթանելու միջազգային առևտրի զարգացումն այնպես, որ այն նպաստի

բոլորի համար զբաղվածության ու արժանապատիվ աշխատանքի ապահովմանը:

Կողմերը պարտավորվում են հարգել, խրախուսել և իրենց օրենքներում ու գործելակերպերում և իրենց ամբողջ տարածքում կիրառել աշխատանքի՝ միջազգայնորեն ճանաչված հիմնարար ստանդարտները, ինչպես սահմանված են ԱՄԿ-ի հիմնարար կոնվենցիաներով և այդ կոնվենցիաների արձանագրություններով, և մասնավորապես՝

a. միավորման ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքի արդյունավետ ճանաչումը,

b. հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերի վերացումը,

c. երեխայի աշխատանքի արդյունավետ վերացումը, և

d. աշխատանքի և մասնագիտության մասով խտրականության բացառումը:

Կողմերը վերահաստատում են իրենց օրենքներում և գործելակերպերում անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության կողմից համապատասխանաբար վավերացված՝ ԱՄԿ-ի հիմնարար, առաջնահերթային և մյուս կոնվենցիաներն ու այդ կոնվենցիաների արձանագրություններն արդյունավետորեն կիրարկելու հանձնառությունը: . . . . [և] պետք է նաև դիտարկեն ԱՄԿ-ի առաջնահերթային և այլ այն կոնվենցիաները վավերացնելու հարցը:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկումն ապահովող ճանապարհային քարտեզ[2]

---

[2] Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկումն ապահովող ճանապարհային քարտեզ, https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf

Աշխատանքային իրավունքների առնչությամբ Համաձայնագրի կիրարկման Ճանապարհային քարտեզում ՀՀ կառավարությունը նախատեսում է

- Մինչև 2023 թվականը
  - Անկախ ռասայական և էթնիկական ծագումից՝ անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքի կիրառման նպատակով համապատասխան իրավական կարգավորումների ամրագրում՝ ԵՄ լավագույն փորձին համահունչ
  - Աշխատանքի և զբաղվածության ոլորտը կարգավորող իրավական ակտերում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքն ամրագրող իրավակակարգավորումների կատարելագործում և այդ ոլորտում խտրականության դեմ պայքարի գործուն մեխանիզմների ներդրում
  - Սոցիալական ապահովության ոլորտում կանանց և տղամարդկանց միջև հավասար վերաբերմունքի սկզբունքի և սոցիալական պաշտպանության այլ տարրերի աստիճանական ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում
- Մինչև 2025 թվականը
  - Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ու դրանց հասանելիության ոլորտում սեռի հիման վրա խտրականության դեմ պայքարի գործուն մեխանիզմների ներդրում
  - Հղի աշխատողների և վերջերս ծննդաբերած կամ կրծքով կերակրող աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներդրում և դրանց իրականացման ապահովում

- Աշխատանքի և զբաղվածության ոլորտում իրավահավասարության սկզբունքն ամրագրող իրավակարգավորումների կատարելագործում և այդ ոլորտում խտրականության դեմ պայքարի գործուն մեխանիզմների ներդրում

- Որոշակի ժամկետով աշխատանքի (ներառյալ՝ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերը, ոչ լրիվ աշխատաժամանակով, ժամանակավոր և սեզոնային աշխատանքները) համար միասնական իրավական դաշտի սահմանման և խտրական վերաբերմունքի բացառման նպատակով իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրների վեր հանում և համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում,

- Կազմակերպությունների կառուցվածքի փոփոխությունների (վերակազմակերպման) դեպքում աշխատողների աշխատանքային իրավունքներին ու երաշխիքներին վերաբերող կարգավորումների ամբողջականացում

- Սոցիալական երկխոսության ամրապնդման և կազմակերպությունների ներսում փոխադարձ վստահության խթանման նպատակով՝ աշխատողներին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման մեխանիզմների բարելավում, ՀՀ օրենսդրության վերանայում

- Աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ կիրառվող պայմանների մասին աշխատողներին տեղեկացնելու՝

գործատուի պարտավորության ամրագրում ՀՀ օրենսդրության մեջ

- Որոշակի ժամկետով կամ ժամանակավոր աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների աշխատանքային միջավայրի բարելավման համար անհրաժեշտ պայմանների սահմանում ՀՀ օրենսդրությամբ՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանության ավելի բարձր մակարդակ երաշխավորելու նպատակով

- Ոչ լրիվ աշխատաժամանակի պայմաններով աշխատողների համար միասնական իրավական դաշտի սահմանման և խտրական վերաբերմունքի բացառման նպատակով իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրների վեր հանում և համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում

➢ Մինչև 2027 թվականը

- Աշխատողների համար աշխատանքից ազատման հետևանքները մեղմացնելու նպատակով՝ աշխատանքից կոլեկտիվ ազատման և (կամ) կազմակերպության սնանկության դեպքում աշխատողների տեղեկացվածության, նրանց խորհրդատվության և մասնակցության վերաբերյալ լրացուցիչ ընթացակարգերի սահմանում

- Աշխատաժամանակին, հանգստի ժամանակին, գիշերային աշխատանքին վերաբերող օրենսդրական կարգավորումների համապատասխանեցում ԵՄ լավագույն փորձին

Ճանապարհային քարտեզը նախատեսում է առանձին ոլորտներում աշխատանքի

անվտանգության և/կամ առողջության վերաբերյալ առկա օրենսդրական դաշտի վերլուծություն և համապատասխանեցում ԵՄ պահանջներին: Այս գործողությունների ժամանակացույցը սահմանում է ՀՀ - ԵՄ գործընկերության կոմիտեն: Ի թիվս այլոց նախատեսվում է՝

- Աշխատավայրում աշխատողների անվտանգության ու առողջության պահանջների սահմանում ՀՀ օրենսդրությամբ՝ ԵՄ ստանդարտներին համապատասխան
- Աշխատավայրում աշխատողների կողմից աշխատանքային սարքավորումների օգտագործման՝ անվտանգության և առողջության նվազագույն պահանջների մասին չափորոշիչների ընդունում
- «Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում
- Ժամանակավոր կամ շարժական շինարարական հարթակներում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների սահմանում ՀՀ օրենսդրությամբ՝ ԵՄ պահանջներին համապատասխանեցման նպատակով
- «Անվտանգություն տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերի մշակում
- Աշխատավայրում քաղցկեղածին կամ մուտագեն նյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված վտանգներից աշխատողներին պաշտպանելու նպատակով պահանջների սահմանում ՀՀ օրենսդրությամբ

- Աշխատավայրում անվտանգության և/կամ առողջության վերաբերյալ ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջների սահմանում ՀՀ օրենսդրությամբ
- Հորատման միջոցով հանքարդյունահանող արդյունաբերությունում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման նորմատիվների սահմանում
- Վերգետնյա և ստորգետնյա հանքարդյունահանման արդյունաբերությունների աշխատողների անվտանգության ու առողջության պաշտպանության նպատակով նորմատիվների սահմանում
- Անհատական պաշտպանության միջոցներին, գործատուի կողմից այդ միջոցների տրամադրման և աշխատողների կողմից կիրառության վերաբերյալ նվազագույն պահանջների սահմանում
- Աշխատավայրում քիմիական, ֆիզիկական և կենսաբանական ազդակների ներգործության ռիսկից աշխատողների պաշտպանության նպատակով պահանջների սահմանում
- Անչափահաս աշխատողների աշխատանքային պայմանների վերաբերյալ պահանջների սահմանում

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՄԲ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2001 թվականի հոկտեմբերի 18-ին և Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի մարտի 1-ից: Խարտիայում ամրագրված են մի շարք աշխատանքային

իրավունքներ և սկզբունքներ՝աշխատանքի արդար պայմանների իրավունքը, արդարացի վարձատրման իրավունքը, աշխատող կանանց մայրության իրավունքը, առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը, աշխատանքում արժանապատվության իրավունքը և այլն:

Նշված հոդվածներից աշխատանքային իրավունքների մասով Հայաստանը վավերացրել է՝

- Աշխատանքի իրավունքը,
- Աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքը,
- Մյուս Կողմերի տարածքներում վճարովի աշխատանքով զբաղվելու իրավունքը,
- Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքը,
- Առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը,
- Աշխատանքային պայմանների և աշխատանքային միջավայրի սահմանմանը և բարելավմանը մասնակցելու իրավունքը ,
- Աշխատանքից ազատելու դեպքերում պաշտպանվածության իրավունքը ,
- Ընտանեկան պարտավորություններով աշխատողների հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը
    - Ձեռնարկությունում և նրանց տրամադրվելիք մեխանիզմներում աշխատողների ներկայացուցիչների պաշտպանվածության իրավունքը
    -

Հայաստանը ստանձնել է պարտավորություններ նաև Խարտիայով երաշխավորված մի շարք իրավունքների

մասնակի ապահովման մասով, որոնցից աշխատանքային իրավունքներին են վերաբերվում հետևյալ դրույթները՝

- Աշխատանքի արդար պայմանների իրավունք,
- Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքը,
- Արդարացի վարձատրման իրավունքը :

Կարևոր է նկատել, որ Հայաստանը չի վավերացրել աշխատանքային իրավունքներին վերաբերվող օրինակ՝ Խարտիայի 25-րդ հոդվածը, որը վերաբերվում է *գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների հայցերի պաշտպանության իրավունքին*,, 26-րդ հոդվածը, որը վերաբերվում է *աշխատանքում արժանապատվության իրավունքին*, 29-րդ հոդվածը, որը վերաբերվում է *աշխատանքից կոլեկտիվ ազատման ընթացակարգերում տեղեկատվության և խորհրդատվության իրավունքին* և այլն:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը, որը դեռևս չի վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից միտված է բարելավելու Խարտիայով երաշխավորված սոցիալական, այդ թվում աշխատանքային իրավունքների արդյունավետ իրացումը: Մասնավորապես, լրացուցիչ արձանագրությունը հնարավորություն է տալիս աշխատանքային իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ դերակատարներին՝ արհմիություններին, աշխատողների և գործատուների շահերը ներկայացնող կազմակերպություններին և այլ շահառուներին, մասնակցել Խարտիայով սահմանված իրավունքների իրացման ապահովմանը և ներպետական օրենսդրությունը դրանց համապատասխանեցնելուն,

իրավակիրառ պրակտիկայում կիրառելիության վերահսկմանը՝ ներկայացնելով կոլեկտիվ բողոքներ Խարտիայով ամրագրված իրավունքների խախտումների վերաբերյալ:

Հատկանշական է, որ Խարտիայի անդամ պետությունները պարբերաբար ներկայացնում են ազգային զեկույցներ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե, որտեղ նրանք նկարագրում են Խարտիայի ներքո պետության կողմից ստանձնած իրենց պարտավորությունների իրականացումը՝ ներպետական օրենսդրության մեջ և գործնականում, այսինքն՝ իրավակիրառ պրակտիկայում:

Առանց կոլեկտիվ բողոքների ներկայացման ընթացակարգային հնարավորության, Կոմիտեն Խարտիայի դրույթների կատարման վերաբերյալ եզրակացություն տալու համար հիմնվում է միայն կառավարության կողմից իրեն ներկայացված ազգային զեկույցների վրա: Կոլեկտիվ բողոքների նման համակարգի ներդրումը կոչված է բարձրացնելու վերահսկիչ մեխանիզմների արդյունավետությունը՝ չհիմնվելով բացառապես Կառավարության կողմից ներկայացված հաշվետվությունների վրա:

1. Լրացուցիչ արձանագրությամբ ***բողոքներ ներկայացնելու իրավունք ունեն***

- Ազգային և միջազգային արհմիությունները և գործատուների ու աշխատողների շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները,
- Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները (եթե ներառված են Կոմիտեի կողմից հրապարակված հատուկ ցանկում՝ իրենց դիմումի համաձայն),
- ՀԿ-ները, եթե պետությունը ճանաչում է նրանց իրավունքը բողոք ներկայացնելու մասով:

II. ***Կոլեկտիվ բողոքների ներկայացման վիճակագրությունը*** հետևյալն է՝ 16.12.2021թ. դրությամբ առկա է 35 ընթացիկ գործ և 167 ավարտված գործ: Կոմիտեի կողմից քննված գործերից 16-ը աշխատանքային իրավունքներին վերաբերող բողոքներ են եղել, որոնք ներկայացվել են հետևյալ երկրների դեմ՝ Իտալիա, Իռլանդիա, Բելգիայի, Հունաստան, Ֆիլանդիային և այլն: Բողոքների մեծամանությունը բավարարվել է Կոմիտեի կողմից և արձանագրվել, որ կոնկրետ գործերով առկա են Խարտիայի դրույթների խախտումներ:

Այսպիսով, Լրացուցիչ արձանագրությունը հնարավորություն է ընձեռնում միջազգային և ազգային արհմիություններին և գործատուների ու աշխատողների շահերը ներկայացնող կազմակերպություններին հետևել աշխատանքային իրավունքների պահպանմանը, ներպետական օրենսդրության մեջ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց համապատասխանեցմանը՝ Խարտիայով ամրագրված իրավունքներին և սկզբունքներին:

Լրացուցիչ արձանագրության վավերացումը կարևոր գործիք կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում գործող արհմիությունների և գործատուների ու աշխատողների շահերը ներկայացնող կազակերպությունների համար՝ բարձացնելով նրանց դերակատարումը աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում: Սա հատկապես կարևոր է արհմիությունների բարեփոխումների համատեքստում, որն այս պահին օրակարգային հարց է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

DECENT WORK NOW
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԻՄԱ

Ո՞Մ դիմել, երբ խախտվել են ձեր աշխատանքային իրավունքները

Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին՝
Թեժ գիծ՝ 81-07
Էլեկտրոնային դիմելու հղում
www.employeeprotect.am/am/report

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Անվճար խորհրդատվություն՝ 077 342268
Էլեկտրոնային դիմելու հղում
www.facebook.com/DecentWorkNow
www.arhmiutyun.am/contact

Մարդու իրավունքների պաշտպան
Թեժ գիծ՝ 116
Մարզային գրասենյակներ
www.ombuds.am/am/site/ApplyTeamAddress
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Թեժ գիծ՝ 114
Էլեկտրոնային դիմելու հղում
www.e-request.am/hy

HELSINKI CITIZENS ASSEMBLY
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՏԻ հասարակությունների կենտրոն
ACTOR
APR Group